ասածն՝ ի գերեզմանն Արիոսի եւ Նեստորի մտանի-
ցեմ[1]. եւ այլ բազում երդմունս, զոր ոչ է արժան
ելթէ ի միտս և ի բերանս ուղղափառաց անկանիցի։
Ուխտ և դաշինս առնեմք, զի և եղբայրութիւնս մեր
անջրելի պահեմք ընդ Աստուածատուր վարդապետն,
մինչեւ հաւատարմացուցանել սոցա. վասն որոյ և ա-
սեն վարդապետքն. եթէ այդ այդպէս է՝ բարի է։ Այլ
և բազում բան ասեն, հաշտին ընդ միմեանս և խա-
զաղանան։

Դշի (22 Օքտ.). մեր Վարդապետն ի Սուրբ Լու-
սաւորիչ գնաց։ Եւ օրս ի գերեզմաներն գնացաք վասն
Թուրվանդին մեռանելոյ, եւ անտի գնացի ի Սուրբ
Գէորգն հանդիպիլ Առաջնորդին՝ ողջունելով գնա։ Եւ
ի պահու լուսանալ առաւօտուս երոցք եղեւ ի Դուռն
Երկաթի, ոչ ընդ նա՝ այլ մօտ ի սահմանս նմին։

Կիրակի ԻԶ-ին՝ երեկոյիս ի հարսանիք գնացի Սէ-
ֆէր պալէ դատերն։ Եւ օրս բօթ մի լու եղեւ մեզ.
ի քաղաքն Պուղտան, որք կան սակաւաւորս ի Հայոց
ազգաց մերոց, զեկեղեցիսն նոցին փակեալ են, վասն
զի դաւանութեամբ Յունաց էին Պուղտանիքն, զայն
պատճառելով Հայոց թէ Ազգ ձեր մեր ազգին ոչ տայ
հանգիստ ի յերուսաղէմ. բայց եւ ոչ գիտեն զի աս-
տուածամարտք ազգ իւրեանց են։

Բշի օրս (27 Օքտ.) վարանեալ Եղիազար վարդա-
պետին զբանս զայս, եկ գնաց զկնի պատրիկին զի ա-
սասցէ բան ինչ նմա վասն իրացս, և պատրիկն ելեալ
էր մի ժամաւ յառաջ, հանդերձ [ուխ]տաւորքն Հա-
յոց, քան զգնալ Վարդապետին առ նա։ Եւ իբրեւ ոչ
եհաս նմա՝ եկն յեկեղեցի Սուրբ Լուսաւորչին և յղեաց
փութանակի արս ոմանս ի մեծամեծացն մեր առ Հա-
սան աղան, որ էր մաքսապետ տէր ամենայն ծովե-

1) մտանիցէ.